# Ընդերքօգտագործման թափոնների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների՝ ըստ վտանգավորության դասակարգման կարգը սահմանելու մասին

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

-----------------------2017 թվականի N –Ն

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ՝ ԸՍՏ ՎՏԱՆԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 16-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել՝

1) ընդերքօգտագործման թափոնների՝ ըստ վտանգավորության դասակարգման կարգը՝ համաձայն N1 հավելվածի,

2) ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների՝ ըստ վտանգավորության դասակարգման կարգը՝ համաձայն N2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Հավելված N1

ՀՀ կառավարության 2017 թվականի

-ի N -Ն որոշման

## Կ Ա Ր Գ

## ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ՝ ԸՍՏ ՎՏԱՆԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

1. Ընդերքօգտագործման թափոնների (այսուհետ՝ թափոններ) վտանգավորության դասը սահմանվում է շրջակա միջավայրի վրա դրանց հնարավոր վնասակար ազդեցության աստիճանով՝ թափոնի անուղղակի կամ ուղղակի ազդեցության դեպքում՝ համաձայն հետևյալ չափանիշների.

| NN ը/կ | Շրջակա միջավայրի վրա թափոնների վնասակար ազդեցության աստիճանը | Թափոնների՝ շրջակա միջավայրի համար վտանգավորության դասին դասելու չափանիշները | Թափոնի վտանգ<br>շրջակա միջավ |
|---|---|---|---|
| 1. | ՇԱՏ ԲԱՐՁՐ | Էկոլոգիական համակարգը անդառնալիորեն խախտված է: Վերականգնման ժամանակահատվածը բացակայում է | I ԴԱՍ<br>ՉԱՓԱԶԱՆՑ ՎՏ |
| 2. | ԲԱՐՁՐ | Էկոլոգիական համակարգը խիստ խախտված է: Վերականգնման ժամանակահատվածը 30 տարուց պակաս չէ՝ վտանգավոր ազդեցության աղբյուրի լրիվ վերացումից հետո | II ԴԱՍ<br>ԲԱՐՁՐ ՎՏԱՆԳԱ |
| 3. | ՄԻՋԻՆ | Էկոլոգիական համակարգը խախտված է: Վերականգնման ժամանակահատվածը 10 տարուց պակաս չէ՝ գոյություն ունեցող աղբյուրից վտանգավոր ազդեցության նվազումից հետո | III ԴԱՍ<br>ՉԱՓԱՎՈՐ ՎՏԱՆ |
| 4. | ՑԱԾՐ | Էկոլոգիական համակարգը խախտված է: Ինքնավերականգնման ժամանակահատվածը 3 տարուց պակաս չէ: | IV ԴԱՍ<br>ՔԻՉ ՎՏԱՆԳԱՎՈ |
| 5. | ՇԱՏ ՑԱԾՐ | Էկոլոգիական համակարգը գործնականորեն խախտված չէ: | V ԴԱՍ<br>ԳՈՐԾՆԱԿԱՆՈՐԵ |

2. Թափոնների՝ շրջակա միջավայրի համար վտանգավորության դասին դասելն իրականացվում է հաշվարկային կամ փորձարարական մեթոդներով:
3. Թափոններ առաջացնողների կողմից թափոնի հաշվարկային մեթոդով թափոնի վտանգավորության 5-րդ դասին դասելու դեպքում այն հաստատվում է փորձարարական մեթոդով: Թափոնի վտանգավորության 5-րդ դասին դասելու փորձարարական մեթոդով չհաստատվելու դեպքում, թափոնը դասվում է վտանգավորության 4-րդ դասին:
4. Թափոնների՝ շրջակա միջավայրի համար վտանգավորության դասին

11. հաշվարկային մեթոդով դասելը իրականացվում է շրջակա միջավայրի վրա թափոնի ազդեցության դեպքում դրա վտանգավորության աստիճանը բնութագրող (K) ցուցանիշի հիման վրա, որը հաշվարկվում է թափոնը կազմող նյութերի (այսուհետ՝ թափոնի բաղադրիչներ) վտանգավորության ցուցանիշների գումարով, շրջակա միջավայրի համար (Ki):

5. Թափոնների բաղադրիչների ցանկը և դրանց քանակական պարունակությունը հաստատվում են ըստ ելային հումքի բաղադրության և դրա վերամշակման տեխնոլոգիական պրոցեսների կամ քիմիական քանակական անալիզի արդյունքների:
6. Թափոնի բաղադրիչի վտանգավորության աստիճանի ցուցանիշը (Ki) հաշվարկվում է, որպես թափոնի բաղադրիչների կոնցենտրացիաների (Ci) և շրջակա միջավայրի համար դրա վտանգավորության աստիճանի գործակցի (Wi) հարաբերություն:
7. Շրջակա միջավայրի համար թափոնի բաղադրիչի վտանգավորության աստիճանի գործակիցը թափոնի բաղադրիչի քանակին թվապես հավասար պայմանական ցուցանիշ է, որից ցածր արժեքի դեպքում թափոնը շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն չի թողնում: Շրջակա միջավայրի համար թափոնի բաղադրիչի վտանգավորության աստիճանի գործակցի չափման միավորը պայմանականորեն ընդունվում է որպես մգ/կգ:
8. Շրջակա միջավայրի համար թափոնի բաղադրիչի վտանգավորության աստիճանի գործակցի որոշման համար ըստ թափոնի յուրաքանչյուր բաղադրիչի հաստատվում են տարբեր բնական միջավայրերում շրջակա միջավայրի համար դրանց վտանգավորության հետևյալ աստիճանները.

| N | Թափոնի բաղադրիչի վտանգավորության առաջնային ցուցանիշները | Թափոնի բաղադրիչի վտանգավորութան աստ միջավայրի համար՝ ըստ յուրաքանչյուր բաղադ | | |
|---|---|---|---|---|
| | | 1 | 2 | 3 |
| 1. | ՍԹԿհ1 (ՄԹԿ2), մգ/կգ | <1 | 1-10 | 10.1-100 |
| 2. | Վտանգավորության դասը հողում | 1 | 2 | 3 |
| 3. | ՍԹԿջ (ՄԹՄ, ԱՄԱՄ) մգ/լ | <0.01 | 0.01-0.1 | 0.11-1 |
| 4. | Տնտեսական - խմելու ջրում վտանգավորության դասը | 1 | 2 | 3 |
| 5. | ՍԹԿձ.տ. (ԱՄԱՄ), մգ/լ | <0.001 | 0.001-0.1 | 0.011-0.1 |
| 6. | Ձկնաբուծական նպատակով օգտագործվող ջրում վտանգավորության դասը | 1 | 2 | 3 |
| 7. | ՍԹԿմ.օ.(ՍԹԿա.մ,ԱՄԱՄ) մգ/մ3 | <0.01 | 0.01-0.1 | 0.11-1 |
| 8. | Վտանգավորության դասը մթնոլորտային օդում | 1 | 2 | 3 |
| 9. | ՍԹԿս.մ. (ԱԹՄ, ԱԹՊ), մգ/կգ | <0.01 | 0.01-1 | 1.1-10 |
| 10. | Ig (S, մգ/լ/ՍԹԿջ, մգ.լ)3 | >5 | 5-2 | 1.9-1 |
| 11. | Ig (Cհագ, մգ/մ3/ՍԹԿա.գ) | >5 | 5-2 | 1.9-1 |
| 12. | Ig (Cհագ, մգ/մ3/ՍԹԿմ.օ կամ ՍԹԿա.մ) | >7 | 7-3.9 | 3.8-1.6 |
| 13. | Ig Kow (օկտանոլ/ջուր) | >4 | 4-2 | 1.9-0 |
| 14. | LD50 մգ/կգ | <15 | 15-150 | 151-5000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 15. | LC50 մգ/մ3 | <500 | 500-5000 | 5001-50000 |
| 16. | LC50 ջր., մգ/լ/96ժ. | <1 | 1-5 | 5.1-100 |
| 17. | ԿԴ=ԹԿՊ5/ԹՔՊ 100% | <0.1 | 0.01-1.0 | 1.0-10 |
| 18. | Կայունությունը (կերպափոխությունը շրջակա միջավայրում) | Առավել թունավոր արտադրանքի առաջացումը, այդ թվում՝ օժտված նոր հատկություններով կամ հեռավոր հետևանքներով | Վտանգավորության այլ չափանիշներով առավել արտահայտված ներգործություն ունեցող արտադրանքի առաջացումը | Արտադրանքի առաջացումը, որի թունունակությունը մոտ է ելանյութի թունունակությանը |
| 19. | Կենսակուտակում (վարքը սննդային շղթայում) | Արտահայտված կուտակում բոլոր օղակներում | Կուտակում մի քանի օղակներում | Կուտակում օղակներից մեկում |
| | Բալ | 1 | 2 | 3 |

9. Սույն կարգի 8-րդ կետում օգտագործված հապավումները բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Հապավումների ցանկ

| | |
|---|---|
| ՍԹԿ$_{հ}$ (մգ/կգ) | Հողում նյութի սահմանային թույլատրելի կոնցենտրացիա |
| ՄԹԿ | Մոտավոր թույլատրելի կոնցենտրացիա |
| ՍԹԿ$_{ջ}$ (մգ/լ) | Տնտեսական-խմելու և կոմունալ կենցաղային ջրօգտագործ օբյեկտների ջրում նյութի սահմանային թույլատրելի կոնցեն |
| ՄԹՄ | Մոտավոր թույլատրելի մակարդակ |
| ԱՄԱՄ | Ազդեցության մոտավոր անվտանգ մակարդակ |
| ՍԹԿ$_{ձ.տ.}$ (մգ/լ) | Ձկնատնտեսական նշանակության ջրային օբյեկտների ջրո սահմանային թույլատրելի կոնցենտրացիա |
| ՍԹԿ$_{մ.օ.}$ (մգ/մ$^3$) | Բնակավայրերի մթնոլորտային օդում նյութի միջին օրական թույլատրելի կոնցենտրացիա |
| ՍԹԿ$_{ա.մ.}$ (մգ/մ$^3$) | Բնակավայրերի մթնոլորտային օդում նյութի միանվագ առա սահմանային թույլատրելի կոնցենտրացիա |
| ՍԹԿ$_{ա.գ.}$ (մգ/մ$^3$) | Աշխատանքային գոտու օդում նյութի միանվագ առավելագ թույլատրելի կոնցենտրացիա |
| ԱԹՊ | Առավելագույն թույլատրելի պարունակություն |
| ԱԹՊ | Առավելագույն թույլատրելի մակարդակ |
| S (մգ/լ) | Թափոնի բաղադրիչի (նյութի) լուծելիությունը ջրում 20$^0$C-ու |
| C$_{հագ}$(մգ/մ$^3$) | Նյութի հագեցնող կոնցենտրացիան օդում 20$^0$C-ում և նորմ |
| Kow | Օկտանոլ/ջուր համակարգում 20$^0$C-ում բաշխման գործակի |
| | Բաղադրիչի միջին մահացու չափաքանակը՝ արտահայտվ |

| | |
|---|---|
| $LD_{50}$ (մգ/կգ) | միլիգրամներով 1 կգ կենդանի քաշի նկատմամբ, որը բերու կենդանիների 50%-ի մահվան միանգամյա ներբերանային ն դեպքում |

| | |
|---|---|
| $LD^{\text{մաշկ}}_{50}$ (մգ/կգ) | Բաղադրիչի միջին մահացու չափաքանակը՝ արտահայտվ միլիգրամներով 1կգ կենդանի քաշի նկատմամբ, որը բերու կենդանիների 50%-ի մահվան միանգամյա մաշկին քսելիս՝ միասնականացված պայմաններում |
| $LC_{50}$ (մգ/մ$^3$) | Նյութի միջին մահացու կոնցենտրացիա, որը բերում է փորձ կենդանիների 50%-ի մահվան ինհալացիոն ճանապարհով դեպքում՝ միասնականացված պայմաններում |
| ԿԴ=ԹԿՊ5/ԹՔՊ | Կենսաբանական տրոհում (դիսիմիլացում) |
| $LC5^{\text{ջուր}}_{50}$ (մգ/լ/96ժ) | Նյութի միջին մահացու կոնցենտրացիան ջրում, որը բերու ջրային կենդանիների 50%-ի մահվան (օրինակ) ձկների 96 |
| ԹԿՊ5 | Թթվածնի կենսաբանական *պահանջարկ* |
| ԹՔՊ | Թթվածնի քիմիական *պահանջարկ* |
| ՍԹԿ $_{\text{ս.մ.}}$ (մգ/կգ) | Սննդամթերքում  նյութի սահմանային թույլատրելի կոնցեն |

10. Wi-ի հաշվարկի համար օգտագործվող ցուցանիշների ցանկում ներառվում է տեղեկատվության ապահովման ցուցանիշը՝ շրջակա միջավայրի համար թափոնների բաղադրիչների վտանգավորության աստիճանի առաջնային ցուցանիշի վերաբերյալ տեղեկատվության բացակայության հաշվառման նպատակով:
11. Տեղեկատվության ապահովման ցուցանիշը հաշվարկվում է հաստատված ցուցանիշների թիվը (n) 12-ի բաժանելով (N՝ շրջակա միջավայրի համար թափոնների բաղադրիչների առավել կարևոր, վտանգավորության առաջնային ցուցանիշների քանակն է):
12. Բալերը ներկայացվում են տեղեկատվության ապահովման փոփոխման հետևյալ տիրույթներով.

| Տեղեկատվության ապահովման փոփոխության տիրույթներ (n/N) | Բալ |
|---|---|
| 0.5-0.7 (n=6-8) | |
| 0.71-0.9 (n=9-10) | 1 |
| >0.9 (n>11) | 2 |
| | 3 |
| | 4 |

13. Ըստ թափոնի բաղադրիչների՝ շրջակա միջավայրի համար վտանգավորության աստիճանների, տարբեր բնական միջավայրերում հարաբերական վտանգավորության ցուցանիշը (շրջակա միջավայրի համար ($X_i$)) հաշվարկվում է որպես բոլոր պարամետրերի գումարային բալերի և այդ պարամետրերի քանակի հարաբերություն:
14. $W_i$ գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևերից մեկով.

$Lg\ W_i$ = $4 – 4 / Z_i$; $1 < Z_i < 2$ համար

$Z_i$; $2 \le Z_i \le 4$ համար

$2 + 4 / (6- Z_i)$ $4 < Z_i < 5$ համար

Որտեղ $Z_i = 4\ X_i/3 – 1/3$

15. Վտանգավոր թափոնների առավել տարածված բաղադրիչների համար $W_i$ գործակիցները բերված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2.

Շրջակա միջավայրի համար թափոնի բաղադրիչի վտանգավորության աստիճանի գործակիցը թափոնների առանձին բաղադրիչների համար

| Բաղադրիչի անվանումը | Xi | Zi | Lg Wi | W |
|---|---|---|---|---|
| Ալդրին | 1,857 | 2,14 | 2,14 | 1 |
| Բենզ (ա)պիրեն | 1,6 | 1,8 | 1,778 | 5 |
| Բենզոլ | 2,125 | 2,5 | 2,5 | 3 |
| Հեքսաքլորբենզոլ | 2,166 | 2,55 | 2,55 | 3 |
| 2-4 դինիտրոֆենոլ | 1,5 | 1,66 | 1,66 | 3 |
| Դի (ո)բութիլֆտալատ | 2 | 2,33 | 2,33 | 2 |
| Դիօքսիններ | 1,4 | 1,533 | 1,391 | 2 |
| Դիքլորպրոպեն | 2,2 | 2,66 | 2,66 | 3 |
| Դիմեթիլֆտալատ | 2,166 | 2,555 | 2,555 | 3 |
| Դիքլորֆենոլ | 1,5 | 1,66 | 1,66 | 3 |
| Դիքլորդիֆենիլեռքլորէթան | 2 | 2,33 | 2,33 | 2 |
| Կադմիում | 1,42 | 1,56 | 1,43 | 2 |
| Լինդան | 2,25 | 2,66 | 2,66 | 4 |
| Մանգան | 2,30 | 2,37 | 2,73 | 5 |
| Պղինձ | 2,17 | 2,56 | 2,56 | 3 |
| Մկնդեղ | 1,58 | 1,77 | 1,74 | 5 |
| Նավթալին | 2,285 | 2,714 | 2,714 | 5 |
| Նիկել | 1,83 | 2,11 | 2,11 | 1 |
| N-նիտրոզոդիֆենիլամին | 2,8 | 3,4 | 3,4 | 2 |
| Պենտաքլորբիֆենիլներ | 1,6 | 1,8 | 1,778 | 5 |
| Պենտաքլորֆենոլ | 1,66 | 1,88 | 1,88 | 7 |
| Սնդիկ | 1,25 | 1,33 | 1,00 | 1 |
| Ստրոնցիում | 2,86 | 3,47 | 3,47 | 2 |
| Արծաթ | 2,14 | 2,52 | 2,52 | 3 |
| Կապար | 1,46 | 1,61 | 1,52 | 3 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Տետրաքլորէթան | 2,4 | 2,866 | 2,866 | 7 |
| Տոլուոլ | 2,5 | 3 | 3 | 1 |
| Եռքլորբենզոլ | 2,33 | 2,77 | 2,77 | 5 |
| Ֆենոլ | 2 | 2,33 | 2,33 | 2 |
| Ֆուրաններ | 2,166 | 2,55 | 2,55 | 3 |
| Քլորոֆորմ | 2 | 2,333 | 2,333 | 2 |
| Քրոմ | 1,75 | 2,00 | 2,00 | 1 |
| Ցինկ | 2,25 | 2,67 | 2,67 | 4 |
| Էթիլբենզոլ | 2,286 | 2,714 | 2,714 | 5 |

16. Թափոնի բաղադրիչի՝ շրջակա միջավայրի համար վտանգավորության աստիճանի ցուցանիշը $K_i$ հաշվարկվում է հետևյալ բանաձևով

$K_i = C_i / W_i$

որտեղ

$C_i$ - վտանգավոր թափոնում i-րդ բաղադրիչի կոնցենտրացիան (մգ/կգ թափոնի)

$W_i$ - շրջակա միջավայրի համար վտանգավոր թափոնի i-րդ բաղադրիչի վտանգավորության աստիճանի գործակից (մգ/կգ)

$K = K_1 + K_2 + ............+ K_{n,}$

որտեղ

K - շրջակա միջավայրի համար թափոնի վտանգավորության աստիճանի ցուցանիշ,

$K_1 + K_{2, .......} K_n$ - շրջակա միջավայրի համար թափոնի առանձին բաղադրիչների վտանգավորության աստիճանների ցուցանիշները:

17. Հաշվարկային մեթոդով թափոնների՝ վտանգավորության դասին դասելը, ըստ շրջակա միջավայրի համար թափոնի վտանգավորության աստիճանի ցուցանիշի, իրականացվում է համաձայն հետևյալ աղյուսակի.

| Թափոնի վտանգավորության դասը | Շրջակա միջավայրի համար թափոնի վտանգավորության աստիճանը (K) |
|---|---|
| I | $10^6 \geq K > 10^4$ |
| II | $10^4 \geq K > 10^3$ |
| III | $10^3 \geq K > 10^2$ |
| IV | $10^2 \geq K > 10$ |
| V | $K \leq 10$ |

18. Թափոնների՝ շրջակա միջավայրի համար վտանգավորության դասին

դասելու փորձարարական մեթոդը իրականացվում է մասնագիտացված լաբորատորիաներում:

19. Փորձարարական մեթոդն օգտագործվում է.

1) հաշվարկային մեթոդով որոշված թափոնների վտանգավորության 5-րդ դասը հաստատելու համար,

2) թափոնների վտանգավորության դասն որոշելիս, երբ դրանց քանակական և որակական կազմը անհնար է որոշել,

3) շահագրգիռ կողմի հաշվին և ցանկությամբ թափոնների վտանգավորության դասը ճշտելու դեպքում՝ որը ստացվել է ըստ հաշվարկային մեթոդի:

Հավելված N2

ՀՀ կառավարության 2017 թվականի

**-**ի N -Ն որոշման

**Կ Ա Ր Գ**

**ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ՝ ԸՍՏ ՎՏԱՆԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ**

1. **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Ընդերքօգտագործման թափոնների (այսուհետ՝ թափոններ) օբյեկտը դասակարգվում է որպես «Ա» կատեգորիայի օբյեկտ, եթե դրա կառուցվածքային ամբողջականության խախտման արդյունքում եղած փլուզման կամ տեխնիկական անվտանգության կանոնների և նորմերի խախտմամբ իրականացված շահագործման (այսուհետ՝ ոչ ճիշտ շահագործում) հետևանքները կարճաժամկետ կամ երկարաժամկետ ապագայում կարող են հանգեցնել՝

- կյանքի կորստի անժխտելի հավանականության,
- մարդու առողջության նկատմամբ լուրջ վտանգի,
- օբյեկտի շրջանում էկոլոգիական իրավիճակի անդարձելիորեն կամ խիստ խախտման:

2. Թափոնների օբյեկտը դասակարգվում է «Ա» կատեգորիայի հետևյալի հիման վրա՝

- փլուզում՝ կապված կառուցվածքային անսարքության կամ ոչ ճիշտ շահագործման հետ,
- վտանգավոր թափոնների բաղադրությունը,
- վտանգավոր նյութերի բաղադրությունը:

3. Թափոնների օբյեկտն ըստ վտանգավորության կատեգորիայի դասակարգելիս դիտարկվում են սույն կարգի 2-րդ կետում նշված բոլոր երեք պարամետրերը։
4. Եթե օբյեկտը համարվում է «Ա» կատեգորիայի օբյեկտ, հիմնվելով վերը նշված պարամետրերից որևէ մեկի վրա, ապա օբյեկտի ընդհանուր դասակարգումը «Ա» կատեգորիայի է և մյուս երկու պարամետրերը դիտարկելու անհրաժեշտություն չկա:

5.Եթե երեք պարամետրերից ոչ մեկը չի հանգեցնում «Ա» կատեգորիայի դասակարգման, ապա օբյեկտի ընդհանուր դասակարգումն «Ա» կատեգորիայի չէ:

6. Իներտ թափոններ կամ չաղտոտված հող պարունակող օբյեկտների համար կիրառելի է միայն առաջին պարամետրը (փլուզում՝ կապված կառուցվածքային ամբողջականության խախտման հետ):
7. Այն օբյեկտների համար, որոնք հիմնականում վտանգավոր թափոններ են պարունակում, երկրորդ պարամետրը կարող է ուղիղ կերպով հանգեցնել «Ա» կատեգորիայի դասակարգման:
8. Օբյեկտի ներկայացրած պոտենցիալ վտանգը կարող է փոփոխության ենթարկվել շահագործման և փակման միջև ընկած ժամանակահատվածում: Հետևաբար դասակարգման վերանայում պետք է իրականացվի օբյեկտի շահագործման ավարտի ժամանակ, եթե ոչ ավելի վաղ:

1. **ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ ԿԱՄ ՈՉ ՃԻՇՏ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ՓԼՈՒԶՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ**

9. Եթե թափոնների օբյեկտի կառուցվածքային ամբողջականության խախտման արդյունքում եղած փլուզումը, անկախ օբյեկտի տեսակից, կարող է հանգեցնել լուրջ վտանգների մարդու առողջության համար կամ օբյեկտի շրջանում էկոլոգիական իրավիճակի անդարձելիորեն կամ խիստ խախտման, ապա օբյեկտը պետք է դասակարգվի որպես «Ա» կատեգորիայի օբյեկտ:
10. Եթե օբյեկտի ոչ ճիշտ շահագործումը կարող է կարճաժամկետ կամ երկարաժամկետ ապագայում հանգեցնել լուրջ վտանգների մարդու առողջության համար կամ օբյեկտի շրջանում էկոլոգիական իրավիճակի անդարձելիորեն կամ խիստ խախտման, ապա օբյեկտը պետք է դասակարգվի որպես «Ա» կատեգորիայի օբյեկտ:
11. Պոչանքների ամբարտակների կառուցվածքային ամբողջականության խախտման պարագայում համարվում է, որ մարդկային կյանքերը վտանգված են ջրի կամ խյուսի՝ գետնից 0.7մ և ավել բարձրության և 0.5

մ/վ և ավել արագության դեպքում: Մարդկային կյանքերի կորստի և մարդու առողջությանը լուրջ վնաս հասցնելու հավանականությունը գնահատելիս պետք է հաշվի առնվեն հետևյալ գործոնները`

- օբյեկտի չափերը,
- օբյեկտում գտնվող թափոնների տեսակն ու ծավալը,
- տեղագրությունը, ներառյալ խոնավացման հատկությունները, օրինակ` լճերը,
- հեղեղի բնակելի տարածքներ հասնելու ժամանակահատվածը,
- ջրի կամ խյուսի մակարդակը,
- ջրի կամ խյուսի մակարդակների բարձրացման արագությունը,
- տեղանքին հատուկ ցանկացած գործոն, որը կարող է ազդեցություն ունենալ կյանքի կորստի կամ մարդու առողջության համար վտանգի հավանականության վրա:

12. Շարժման մեջ գտնվող թափոնների կույտը կարող է վտանգել մարդկային կյանքեր, եթե մարդիկ բնակվում են թափոնների զանգվածի շարժման գոտում: Մարդկային կյանքի կորստի հավանականության գնահատումը պետք է ներառի հետևյալ գործոնները`

- օբյեկտի չափերը,
- օբյեկտում գտնվող թափոնների ծավալն ու տեսակը,
- կույտի թեքվածության անկյունը,
- կույտի ներսում ներքին ստորգետնյա ջրերի հավաքման հավանականությունը,
- կույտի տարածքը կազմող ապարների լեռնաերկրաբանական կայունությունը,
- տեղագրությունը,
- հեռավորությունը բնակելի և հասարակական շենք, շինություններից, խմելու ջրամատակարարման համակարգերի կառույցներից, գերեզմանատներից,
- հանքարդյունաբերական աշխատանքները:

13. Կառուցվածքային ամբողջականության հետ կապված դասակարգման գործընթացը դիտարկում է օբյեկտից դուրս փոխադրվող որևէ նյութերի ուղղակի ազդեցությունն որպես փլուզման հետևանք (պոչանքների խյուս, ապարներ, աղտոտված և/կամ չաղտոտված ջուր) և արդյունքում առաջացող կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունները (հողի և ջրի աղտոտում, կենդանական աշխարհի կորուստ, բնական միջավայրի ոչնչացում և այլն):
14. Կառուցվածքային ամբողջականության խախտման կամ ոչ ճիշտ շահագործման արդյունքում առաջացած փլուզման արդյունքում լուրջ էկոլոգիական հետևանքի հավանականությունը համարվում է ցածր, եթե`

- պոտենցիալ աղտոտման աղբյուրի հզորությունը ժամանակի ընթացքում նվազում է,
- ազդակիր շրջակա միջավայրը կարող է վերականգնվել սահմանափակ մաքրման և վերականգնման ջանքերի շնորհիվ,
- եթե շրջակա միջավայրին չի հասցվել որևէ մշտական կամ երկարատև

վնաս։

15. Շրջակա միջավայրին հասցված մշտական կամ երկարատև վնասների օրինակներ են՝

- հողի մնացորդային աղտոտումը, որը հանգեցնում է հողօգտագործման սահմանափակումների, մարդու առողջության և էկոլոգիական ռիսկերի,
- մակերևութային կամ ստորգետնյա ջրերի պաշարների երկարատև (10 տարուց ավելի) օգտագործումը,
- մակերևութային ջրերում երկարատև ժամանակահատվածով աղտոտիչների թունավոր կոնցենտրացիաները,
- մակերևութային ջրերում կարճատև ժամանակահատվածով աղտոտիչների խիստ թունավոր կոնցենտրացիաները, եթե առկա է ազդակիր էկոհամակարգի համար անդառնալի վնասի ռիսկ։

16. Ոչ ճիշտ շահագործման արդյունքում աղտոտիչների բացթողնման գնահատումը պետք է հաշվի առնի թե կարճաժամկետ հետևանքները, թե աղտոտիչների երկարաժամկետ արձակումը և պետք է իրականացվի երկու ժամանակահատվածի համար՝

- օբյեկտի գործունեության ժամանակահատվածի և
- փակմանը հետևող երկարաժամկետ հատվածի համար։

17. Կյանքի կորստի կամ մարդու առողջության և շրջակա միջավայրի համար լուրջ վտանգի հավանականությունը սահմանելու համար պոտենցիալ ազդեցությունների ծավալի կոնկրետ գնահատումները պետք է դիտարկվեն աղբյուր-ուղի-ռեցեպտոր շղթայի համատեքստում։ Եթե աղբյուրի և ռեցեպտորի միջև չկա ճանապարհ, ապա օբյեկտը չի կարող դասակարգվել որպես «Ա» կատեգորիայի օբյեկտ՝ կապված կառուցվածքային ամբողջականության խախտման կամ ոչ ճիշտ շահագործման հետ։

## III. ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԸՍՏ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԲԱՂԱԴՐՈՒԹՅԱՆ

18. Թափոնների օբյեկտը դասակարգվում է որպես «Ա» կատեգորիայի օբյեկտ, եթե այն պարունակում է որոշակի տոկոսից ավելի վտանգավոր թափոններ։
19. Սահմանային արժեքը պետք է որոշվի զանգվածի և չոր նյութի հարաբերակցությամբ՝

- պլանավորված շահագործման ավարտին օբյեկտում առկա և որպես վտանգավոր դասակարգված բոլոր թափոնները,
- պլանավորված շահագործման ավարտին օբյեկտում մնացած ակնկալվող թափոնները։

20. Եթե սույն կարգի 19-րդ կետում նշված հարաբերակցությունը գերազանցում է 50 տոկոսը, ապա օբյեկտը պետք է դասակարգվի որպես «Ա» կատեգորիայի օբյեկտ։ Այն դեպքում, երբ հարաբերակցությունը կազմում է 5-50 տոկոս, օբյեկտը կարող է դասակարգվել որպես «Ա» կատեգորիայի օբյեկտ։ Սակայն, օբյեկտը չի

կարող դասակարգվել որպես «Ա» կատեգորիայի օբյեկտ, եթե այն հիմնավորված է տեղամասին հատուկ ռիսկի գնահատմամբ, որը հատուկ ուշադրություն է դարձրել վտանգավոր թափոնների ազդեցության վրա և իրականացվել է որպես դասակարգման մաս՝ հիմնված կառուցվածքային ամբողջականության խախտման կամ ոչ ճիշտ շահագործման արդյունքում փլուզման հետևանքների վրա և ցույց տալով, որ օբյեկտը չպետք է դասակարգվի որպես «Ա» կատեգորիայի օբյեկտ՝ հիմնվելով վտանգավոր թափոնների պարունակության վրա։

21. Այն դեպքում, երբ նշված հարաբերակցությունը 5 տոկոսից ցածր է, օբյեկտը չպետք է դասակարգվի որպես «Ա» կատեգորիայի օբյեկտ՝ հիմնվելով վտանգավոր թափոնների բաղադրության վրա։

1. **ՎՏԱՆԳԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԿԱՄ ՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ ԲԱՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ**

22. Թափոնների օբյեկտը դասակարգվում է որպես «Ա» կատեգորիայի օբյեկտ, եթե այն պարունակում է վտանգավոր դասակարգվելու համար բավարար չափով նյութեր կամ պատրաստուկներ (հավելումներ կամ ռեագենտներ)։

23. Գործող օբյեկտների **(**պոչանքների ավազաններ**)** համար դասակարգումը կարող է հիմնվել օբյեկտում պարունակվող ջրի (և պինդ մարմինների) ուղիղ քիմիական անալիզի վրա՝ նպատակ ունենալով որոշել, թե արդյոք ջրային շերտը և դրա բաղադրությունը կարող են համարվել վտանգավոր պատրաստուկ։ Եթե այո, ապա օբյեկտը պետք է դասակարգվի որպես «Ա» կատեգորիայի օբյեկտ։